

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 42/18

ք.Երևան

16 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ - «Երևան Բուք» ՍՊԸ դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Բողոքաբերը հայտնում է, որ «Երևան Բուք» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ ընկերություն) ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից ներառվել է «Հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-260-Ն օրենքի համաձայն լուծարվող հարկ վճարողների ցանկում և լուծարվել է:

2018թ. մայիսին «Երևան Բուք» ՍՊԸ-ի տնօրենը դիմել է ՀՀ ՊԵԿ նախագահին գործունեությունը վերսկսելու նպատակով լուծարումն անվավեր համարելու խնդրանքով: Որից հետո համապատասխան ստորաբաժանման կողմից մանրամասն ուսումնասիրվելով վերոգրյալ գործընթացը 31.05.2018թ. թիվ 4-2/29095-18 գրությամբ ընկերությանը տեղեկացվել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 25.05.2018թ. թիվ 323-Ա հրամանով «Երևան Բուք» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 02607109) համարվել է «Հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-260-Ն օրենքի համաձայն լուծարվող հարկ վճարողների ցանկում ներառման ոչ ենթակա, ինչպես նաև այն մասին, որ 31.05.2018թ. թիվ 4-2/29050-18 գրությամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը դիմել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը՝ «Երևան Բուք» ՍՊԸ նախկին կարգավիճակը վերականգնելու համար: Արդյունքում «Երևան Բուք» ՍՊԸ-ի գործունեությունը վերականգնվել է:

Բողոքաբերը հայտնում է նաև, որ լուծարման գործընթացում գտնվելու հետևանքով ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված ժամկետում չի կարողացել ներկայացնել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքաբերը խնդրում է հնարավորություն ընձեռել, որպեսզի 2018թ. ընթացքում ընկերությունը գործունեությունը շարունակի իրականացնել շրջանառության հարկի դաշտում:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

«Երևան Բուք» ՍՊԸ-ն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից ներառվել է «Հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-260-Ն օրենքի համաձայն լուծարվող հարկ վճարողների ցանկում և լուծարվել է: Այնուհետև, 31.05.2018թ. ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում ընկերության նախկին կարգավիճակը վերականգնվել է, այն է՝ ընկերության կարգավիճակը դարձել է գործող:

«Երևան Բուք» ՍՊԸ-ն լուծարման գործընթացի մեջ գտնվելու հետևանքով չի կարողացել սահմանված ժամկետում ներկայացնել 2018թ. շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով հստակ սահմանված է, որ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից) նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նույնիսկ նույնը (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատագրած ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շրջանառության հարկ վճարող կարող են համարվել այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը, որոնց նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 58.35 միլիոն դրամը:

Միևնույն ժամանակ, Օրենսգրքի 455-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգրքի 59-րդ և 254-րդ հոդվածներով սահմանված՝ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը, ինչպես նաև Օրենսգրքի 255-րդ հոդվածով սահմանված՝ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը գործում է 2019 թվականի հունվարի 1-ից, իսկ 2018 թվականի ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության ԱԱՀ-ի շեմը սահմանվում է 115 միլիոն դրամ:

Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված են այն վավերապայմանները, որոնց առկայության պայմաններում տնտեսվարող սուբյեկտը չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող:

Քննարկվող դեպքում «Երևան Բուք» ՍՊԸ-ն 2018թ. մինչև մայիսի 31-ը լուծարման գործընթացում գտնվելու հետևանքով ընկերությունը չի կարողացել սահմանված

ժամկետում ներկայացնել 2018թ. շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը (առկա են համապատասխան հիմքերը):

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել «Երևան Բուք» ՍՊԸ-ին ներկայացնել հայտարարություն՝ 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «Երևան Բուք» ՍՊԸ-ի դիմում-բողոքը բավարարել:

2. «Երևան Բուք» ՍՊԸ-ի կողմից շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու դեպքում 2018թ. համարել շրջանառության հարկ վճարող:

Հանձնաժողովի նախագահ՝

Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ

